

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՄ	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE “THE MASYATS AGHAVNI” ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ)	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.)	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.).....	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994).....	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ.....	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ).....	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ... 104	104
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА.....	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ).....	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.).....	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019).....	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY /	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY).....	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՄԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ.....	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարժապատկեր..... 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ..... 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176

Զահրա Մալեթի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.... 188

Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205

Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)..... 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD..... 236

Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ..... 237

Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES..... 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԹՐԵՍՏՈՄԱՏԻՎ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:..... 247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՐԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:..... 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԹԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:..... 250

ՆՈՐ ԳԻՐԹ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.).. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ..... 255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ..... 258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021)..... 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

ԱՐՎԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Աննա Դավթյան

13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ

Հիմնաբաներ. Խաչքար, խաչ, զարդաձև, քիվ, կենաց ծառ, փրկագործություն, վարոյակ, հյուսածո զարդանախշ:

Խաչքարը խորհրդանշական կերպով ներկայացնում է մարդու փրկագործության ճանապարհն ու ընթացքը, ինչպես նաև ամբողջ տիեզերքի խտացված ու այլաբանական պատկերն է: Կենտրոնում Ամենակալ Տերն է՝ Հիսուս Քրիստոսը՝ խաչի տեսքով: Խաչքարի վրա հստակորեն արտահայտված են երկինք-երկիր ուղղահայաց բաժանումները՝ Գողգոթան ներկայացնող աստիճանաձև պատվանդանը, որը հետո փոխարինվեց երկիրը խորհրդանշող վարոյակով, որի վրա Ադամի գանգի պատկերն է՝ որպես մեղավոր մարդկության խորհրդանշան, խաչը՝ որպես կենաց ծառ, սանդուղք, որի միջոցով մարդու հոգին երկինք է բարձրանում, և դրախտը խորհրդանշող քիվը՝ երբեմն Քրիստոսի, առաքյալների ու սրբերի պատկերներով: Աստված, խոնարհվելով և երկիր իջնելով, ծնվեց որպես Մարդ, որպեսզի մեղավոր մարդկությանը խաչի միջոցով բարձրացնի դեպի երկինք: Խաչը, որպես կենաց ծառ, իրար է կապում երկինքն ու երկիրը, իր չորս թևերով ընդգրկում ամբողջ աշխարհը: Իսկ խաչքարերի վրա հանդիպող հյուսածո անկրկնելի պարդաձևերը միտված են դիտողի հոգու վրա զգայական ապրեցություն ունենալուն և քրիստոնեական ճշմարտություններն ավելի լավ ընկալելուն:

Հայ արվեստում խաչքարերը յուրատիպ և ուշագրավ հուշարձաններ են: Դրանք խորհրդանշում են հայ ժողովրդի ինքնությունը, պատմությունը, առաջին քրիստոնյա ազգ լինելը: Խաչքարը հիրավի կարելի է համարել հայ ազգի խորհրդանշաններից, որով ժողովուրդը ներկայանում է աշխարհին: Խաչքարային բազմաթիվ արձանագրություններ վկայում են, որ հայերը կանգնեցրել են խաչքարեր՝ իրենց և իրենց հարազատների հոգիների փրկության համար՝ այդպիսով այն դարձնելով սրբություն և միջնորդ մարդու և Աստծու միջև: Որպես քրիստոնեական գլխավոր խորհրդանիշ՝ խաչն է հանդիսանում խաչքարի գլխավոր և հիմնական տարրը, որը ժամանակի ընթացքում հանճարեղ վարպետների շնորհիվ սկսել է շրջապատվել փրկագործական իմաստ կրող բազմաթիվ այլ տարրերով ու զարդաձևերով: Այդ զարդաձևերի ի հայտ գալը, ամենայն հավանականությամբ, պատահականության արդյունք էր և ուներ իր նշանակությունն ու իմաստը, ինչու չէ՞ նաև իմաստները:

Խաչքարերն իրենց զարդանախշերով այնքան բազմազան են, որ դժվար կլինի հստակորեն դրանք դասակարգել ու ներառել խմբերի մեջ: Չնայած բազմազանությանը՝ կան որոշակի հիմնական զարդաձևեր, որոնք ընդհանուր են բոլոր խաչքարերի դեպքում, սակայն դրանք էլ ունեն իրենց տարբերակները: Կարևորագույն տարրը, որի հիման վրա ու որի շուրջը ստեղծվել է խաչքարերի բազմազանությունը, խաչն է: Խաչի կիրառումը դեռևս հնագույն ժամանակներից պատահական չէր. այն ուներ իր իմաստն ու նշանակությունը, որը հասկացել էին մարդկության նախնիները: Եվ բացարձակապես էլ պատահական չէ, որ հենց խաչն է հանդիսացել քրիստոնեության գլխավոր խորհրդանիշը, քանի որ խաչը՝ հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք ուղղված իր թևերով, ընդգրկում է ամբողջ աշխարհն ու տիեզերքը, ինչպես որ Ամենակալ Աստված Քրիստոսն է ամենուր՝ ընդգրկելով ամբողջ աշխարհը:

Խաչի թե՛ քրիստոնեական և թե՛ հեթանոսական շրջանների բոլոր իմաստները, կարծես, ունեն ընդհանրություններ, որոնց հիմնական միտքն աշխարհն ընդգրկելու, դեպի վեր՝ երկինք ձգված լինելու և աշխարհի կենտրոնը լինելու գաղափարն է: Խաչը, կենաց ծառը համարվում են աշխարհի կենտրոնը, որից ծագում և աշխարհի չորս կողմն է տարածվում ամեն ինչ: Քրիստոս, խաչվելով խաչի վրա՝ խաչի կենտրոնում, խորհրդանշական ձևով ցույց տվեց, որ Իրենով է սկսվում ու ավարտվում ամեն ինչ («Ես եմ Այբը ու ես եմ Քեն», - ասում է

Տերը՝ Աստված, նա, որ Է, որ Էր և որ գալու Է՝ Ամենակալը» (Աստվածաշունչ, Հովհաննեսի Հայտնություն, 1:8)), որ Ինքն Է աշխարհի կենտրոնը, Որից ծագում Է ամեն բարիք:

Խաչից ծագող և խաչն իր հիմքում ունեցող հնագույն զարդաների թվին Է դասվում կեռխաչը (սվաստիկան)՝ հավերժության խորհրդանիշը, որը, բազմաթիվ ձևափոխությունների ենթարկված, հանդիպում Է խաչքարերի վրա՝ հավերժության նշանի, ծաղկի կամ Էլ զարդանախաչված վարդյակի տեսքով: Խաչ, կեռխաչ, ծաղիկ, արեգակ. այս խորհրդանիշները հնում ունեցել են միանման իմաստներ՝ երբեմն խորհրդանշելով մեկը մյուսին: Մովսես Կադանկատվացին արեգակը խաչի ձևով Է պատկերացնում¹:

Շրջանաձև վարդյակների առկայությունը խաչքարերի վրա պատահական չէ, քանի որ շրջանը դեռ հնուց խորհրդանշել Է հոգևորը, հոգևորի հետ կապված կարևորագույն երևույթները՝ հավասարություն, հավերժություն, անսահմանություն, բարություն, գեղեցկություն, ինչպես նաև կապված Է եղել երկնային կատարելության հետ՝ խորհրդանշելով Աստված, երկինք, արեգակ, մուրրակ և այլ տիեզերական ու հավերժական երևույթներ²: Շրջանաձև, խաչաձև, ծաղկաձև վարդյակները ոչ միայն իրենց մեջ կրում են վերը թվարկված իմաստները, այլև գեղեցիկ տեսք են հաղորդում խաչքարին:

13-րդ դարի խաչքարերի կարևոր բաղադրիչներից Է քիվը, որը պատրաստվում էր կամ նույն քարից, կամ Էլ քանդակվում առանձին, մեկ ուրիշ քարից և ամրացվում բուն խաչքարի վրա: Սկզբնական շրջանի խաչքարերը չունեն քիվ, իսկ 12-րդ դարից ի հայտ են գալիս քիվավոր խաչքարերը:

12-13-րդ դարերում քիվի հայտնվելու հետ սկսվում Է տեսանելի դառնալ նրա երկնային-դրախտային ընկալումը: Քիվի վրա պատկերվում են բուսական-այգային խորհրդանիշներ՝ արմավածառեր, նռնաքանդակներ, խաղողի ողկույզներ, երբեմն Էլ՝ կենաց ծառը՝ խաչի կամ թփի տեսքով, որի պտուղները վայելում են արդար հոգիները խորհրդանշող սիրամարգերը կամ աղավնիները³ (տե՛ս նկ. 1): Այսինքն այսպիսի օրինակներում կարելի Է հստակորեն տեսնել դրախտի խորհրդաբանությունը, որտեղ երկնային վայելքներից են օգտվում փրկված հոգիները:

Քիվի՝ որպես դրախտի հստակ ընկալում ենք տեսնում այն խաչքարերի վրա, որտեղ դրախտն արտահայտվում Է Քրիստոսի, Աստվածամոր և այլ սրբերի պատկերներով: Պատահում են պատկերներ՝ Քրիստոս Ամենակալը գահին (Դադիվանքի 1283 թ. խաչքար (տե՛ս նկ. 2), Հաղպատի Ուբանաց խաչքարեր (տե՛ս նկ. 3, 4)), Դեիսիսի՝ բարեխոսության պատկերը (1308 թ. Մոմիկ վարպետի խաչքար (տե՛ս նկ. 5)), Ամենակալը տերունական տեսարաններով շրջապատված (1213 թ. Գեղարդի խաչքար (տե՛ս նկ. 7)) և այլն: Իր վրա կրելով Աստծո, Աստվածամոր, առաքյալների ու սրբերի պատկերները՝ խաչքարը հայ ժողովրդի համար դառնում Է սրբապատկերների փոխարինող:

Հանդիպում են նաև խաչքարեր, որոնցում հստակորեն արտահայտված Է քիվը, սակայն բացակայում են Տերունական, ինչպես նաև երկնային այգին հիշեցնող ծառերի, թփերի ու պտուղների պատկերները, և փոխարենը տեսնում ենք երկրաչափական և բուսական հյուսածո զարդանախաչեր: Քիվի վրայի հյուսածո բուսական զարդանախաչերը կարելի Է կապել երկնային այգու գաղափարի հետ, սակայն ոչնչով չառանձնացող, միանման երկրաչափական զարդաները, ամենայն հավանականությամբ, որևէ առնչություն չունեն դրախտի ու երկնային այգու հետ, և վարպետները այդ դեպքում քիվը պատրաստել են միայն տեխնիկական նպատակներից ելնելով՝ որպես պաշտպանություն: Միանման զարդանախաչերով քիվեր ունեն 13-րդ դարի Հաղարծնի (տե՛ս նկ. 8), Հայրավանքի և Կուրթանի խաչքարերը:

* Հոդվածը ներկայացվել Է 29.06.2021 թ., գրախոսվել՝ 22.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

¹ Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, 1984, էջ 36:

² Буткевич Л., История орнамента, Москва, 2008, с. 19.

³ Պետրոսյան Հ., Խաչքար, Երևան, 2007, էջ 275-276:

«Ամենափրկիչ» կոչվող խաչքարերի դեպքում արևի և լուսնի խորհրդանշական պատկերները տեղադրված են քիվի վրա: 1281 թ. Դսեղի «Ամենափրկիչ» (տե՛ս նկ. 9) քիվի մեջտեղում պատկերված է Ամենակալը գահին, իսկ արևն ու լուսինը՝ Նրա երկու կողմերում: Սա կրկին ապացուցում է քիվի՝ երկնային ոլորտ խորհրդանշելու հանգամանքը: Հիմք ընդունելով այս ամենը՝ կարելի է որոշակիորեն հասկանալ մի քանի խաչքարերի քիվերի խորհրդաբանությունը: Մոտավորապես նմանատիպ պատկերի հանդիպում ենք Գավառի մի խաչքարի (տե՛ս նկ. 10) քիվի վրա, երբ Ամենակալ Քրիստոսի երկու կողմերում մեկական ութաթև աստղեր են, որոնք, ամենայն հավանականությամբ, խորհրդանշում են երկնային լուսատուներին: Մեկ այլ այդպիսի, սակայն ավելի ոճավորված գործ է Գոշավանքի 1291 թ. խաչքարը (տե՛ս նկ. 11), որի քիվի մեջտեղում տեսնում ենք հյուսածո զարդանախշերով պատված եռամաս կամարածև խորանը, իսկ խորանի երկու կողմերում մեկական միանման ութաթև աստղեր են: Բացառված չէ, որ, ոճավորված լինելով, խորանը խորհրդանշում է Ամենակալին, իսկ ութաթև աստղերը, ինչպես նշել ենք, արևի և լուսնի խորհրդանիշներն են:

Արևի և լուսնի պատկերումը խաչի երկու կողմերում խորհրդանշում է խաչի, այսինքն՝ Քրիստոսի՝ աշխարհի Արարիչ ու Տեր լինելը, ինչպես նաև խաչի՝ որպես կենաց ծառի տիեզերական բնույթը: Արևի և լուսնի պատկերման մեկ այլ մեկնաբանություն էլ կա, ըստ որի՝ «քրիստոնեական արվեստում արևն ու լուսինը պատկերում էին խաչի երկու կողմերում արտահայտելով Քրիստոսի երկակիությունը»¹, քանի որ Հիսուս Քրիստոս Ա՛ կատարյալ Աստված է, Ա՛ կատարյալ մարդ:

13-րդ դարի խաչքարերի արմավազարդերն ունեն բազում տարբերակներ կամ էլ փոխարինված են այլ պատկերաբանոթակներով, որոնք հիմնականում բուսական ոլորուն հյուսածո զարդածներ են: Արմավենին դեռ հնագույն ժամանակներից խորհրդանշել է հաղթանակը: Լ. Ազարյանը նշում է, որ արմավազարդը քրիստոնեական արվեստում խորհրդանշել է նաև դրախտը, քանի որ արմավենիներով զարդարվել են դրախտը ներկայացնող տեսարանները: Արմավենու սիմվոլիկ նշանակության բացատրությունը գտնում ենք Աստվածաշնչում: Թագավորների երկրորդ գրքի 6-րդ գլխում ասվում է, որ Սողոմոնի տաճարը զարդարված էր եղևնափայտից քանդակված և ոսկեզօծված երկու քերովքներով և բազմաթիվ արմավենիներով: Եվ հնարավոր է, որ արմավենին խորհրդանշում է նաև Երուսաղեմի տաճարը: Լ. Ազարյանը գրում է Քասաղի, Կողբի, Մրենի տաճարների պատկերների մասին, որտեղ արմավենին խորհրդանշում է Սողոմոնի կառուցած տաճարը, այսինքն՝ Հին կտակարանը, որի գաղափարական հենքի վրա էլ կառուցվում է քրիստոնեական եկեղեցու, այսինքն՝ խաչի գաղափարախոսությունը²: Նմանատիպ պատկերը, երբ արմավածյուղերի վրա հենվում է խաչը, ժամանակի ընթացքում ավելի ամրապնդվում է և դառնում խաչքարերի հիմնական տարրերից մեկը: Հետևաբար նույն բացատրությունը կարելի է վերագրել նաև խաչքարերի արմավատերևներին:

Արմավազարդերի մասին մեկ այլ՝ տարբերվող մեկնաբանության հեղինակ է Առաքել Պատրիկը: Նա խաչքարի վրա հստակորեն արտահայտված է տեսնում երկու խորհրդանշանների առկայությունը. մարմնականի՝ իբրև «Հացն կենաց», և հոգևորի՝ խաղողի ողկույզի, որից ստացվում է գինին: Հոգևորի և մարմնականի այդ բաժանումը, ըստ Նրա, կատարում է խաչի հորիզոնական թևը³:

Առաքել Պատրիկն արմավազարդը նույնացնում է հայ երկրագործների «խաչբուռ» կոչվող ցորենի հասկերից պատրաստված հյուսքի հետ, որը հյուսում էին խաչածև, տեղադրում տան օջախի ճակատին, որպեսզի այն բերեր օրհնություն, ընտանեկան բարօրություն: խաչքարագործ վարպետները, բառացի ըմբռնելով այդ խաչբուռը, ցորենի հասկի

¹ Մանասյան Գ., *խորհրդանշանների հանրագիտարան*, Երևան, 2007, էջ 36:

² Ազարյան Լ., *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Երևան, 1975, էջ 42-44:

³ Պատրիկ Առաքել, *Մտքեր հայկական խաչքարերի մասին*, «Էջմիածին», 1972, Ը, էջ 40:

հյուսիսի փոխարեն երբեմն պատկերել են խաչ բռնած ձեռքեր, այսինքն՝ խաչը բռան մեջ¹ (տես նկ. 12):

Հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Առաքել Պատրիկը խաչքարերի զարդաձևերի իմաստին: Եթե հիմք ընդունենք նրա ասածը, ապա պարզ է դառնում ամրավազարդերի փոխարեն երբեմն հանդիպող խաչ բռնած ձեռքերի առկայությունը, և խաչքարի վրա էլ այդ դեպքում կարելի է տեսնել հոգևորի ու մարմնականի հստակ տարանջատումը և սուրբ Հաղորդության՝ Քրիստոսի մարմնի և արյան գաղափարը՝ ցորենի, այսինքն՝ հացի, և խաղողի, այսինքն՝ գինու տեսքով: Այս պարագայում կրկին տեսանելի է խաչքարի փրկագործական նպատակը, քանի որ սուրբ Հաղորդությունը՝ Քրիստոսի մարմինն ու արյունն են նախևառաջ հիմք հանդիսանում փրկության համար: Սակայն միանշանակ բոլոր խաչքարերի համար չի կարելի ընդունել Առաքել Պատրիկի այս վերլուծությունը, քանի որ հանդիպում են նաև այնպիսի տեսքով խորհրդանշական «արմավազարդեր», որոնք ոչ մի առնչություն չունեն խաչբուռի հետ, համենայն դեպս՝ արտաքինապես խաչբուռ չեն հիշեցնում:

Այդպիսի արմավազարդերի տեսակներն են օձային և թռչնային պատկերագրությամբ զարդաձևերը (տե՛ս նկ. 13): Օձային պատկերումները, որոնցով շրջապատված է կամ որոնց վրա հենվում է խաչը, ըստ Հ. Պետրոսյանի, ունեն պաշտպանիչ նշանակություն, քանի որ մերձավորարևելյան հին պատկերացումների համաձայն, այգի-դրախտը կամ կենաց ծառն անպայմանորեն ենթակա են պաշտպանության²: Խաչի, կենաց ծառի կամ որևէ սրբության՝ երկու կողմից կենդանիներով պաշտպանության գաղափարը տարածված է շատ վաղուց:

Խաչատակի զարդաձևերը կարելի է համարել որպես մի սկիզբ, որը պատկերվում է վարդյակի, եռանկյունու կամ այլ զարդանախշերի ձևով, և որոնցից ծագում է խաչը: Սակայն շատ արմավազարդեր կարծես իրենք սկիզբ առնեն խաչից: Հաշվի առնելով, որ խաչը ներկայացնում է աշխարհի կենտրոնը, որից ծագում է ամեն բարիք, կարելի է հասկանալ, որ արմավազարդերն են դուրս գալիս խաչից: Այս տարբերակը խաչքարի դեպքում ավելի հավանական է, քանի որ խաչքարային հորինվածքում խաչը՝ որպես Քրիստոսի խորհրդանիշ, համարվում է կենտրոնական և հիմնական զարդաձևը, որի հետ կապված են, որին լրացնում են և որից ծագում են մնացած զարդաձևերը: Սակայն եթե հիմնվենք խաչի՝ որպես կենաց ծառի գաղափարի վրա, որը խաչքարերի դեպքում ավելի երկրորդական է, կարելի է խաչատակի զարդաձևերը պատկերացնել որպես մի հիմք, որից ծագում է կենաց ծառը:

Խաչքարերի վրա հանդիպող մրգերից են խաղողն ու նուռը: Խաղողի հասած ու փարթամ ողկույզները սովորաբար հանդիպում են խաչի հորիզոնական թևերից վեր: Վաղ խաչքարերի վրա ծանրացած ողկույզները, ծագելով խաչի ուղղահայաց թևի վերին հատվածից, կախ են ընկնում իրենց ծանրությամբ (տե՛ս նկ. 14): Իսկ ավելի ուշ շրջանի խաչքարերի խաղողի ողկույզները գրեթե կորցնում են իրենց նախնական տեսքը՝ վերածվելով ոճավորված հյուսածո զարդաձևերի (տե՛ս նկ. 15): Նռների քանդակապատկերները հանդիպում են խաչքարերի տարբեր հատվածներում՝ սկսած քիվից, որպես երկնային այգու գաղափար, մինչև ստորին հատվածը, ինչպես օրինակ՝ Հաղպատի Ուբանաց երկու խաչքարերը (13-րդ դար), որտեղ նռները տեղադրված են վարդյակի համար պատվանդան հանդիսացող ուղղանկյունաձև քանդակապատկերի երկու ծայրերին:

Հենց խաղողի և նռան քանդակապատկերները խաչքարերի հորինվածքում ընդգրկելը պատահականություն չէ: Խաղողի և նռան հայրենիք է հանդիսանում Հայկական լեռնաշխարհը, վաղուց այս զարմանալի մրգերին իմաստ ու խորհուրդ է վերագրվել, և դրանք Հայաստանի խորհրդանիշներից են դարձել:

Խաղողը քրիստոնեական արվեստում գրեթե միշտ խորհրդանշել է սուրբ Հաղորդության գինին, այսինքն՝ Քրիստոսի արյունը, հատկապես, երբ այն համադրված է ցորենի հասկերի հետ: Քրիստոսի՝ Իրեն խաղողի որթի հետ համեմատելը, խաղողից գինի ստանալու

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

² Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 287-288:

պայմանը, խաղողի՝ Հայկական լեռնաշխարհում տարածված լինելը հիմնավորում են խաչքարերի վրա նրանց պատկերումը:

Նույնը, համեմատվելով քրիստոնեության հետ, ցույց է տալիս այն, որ, ինչպես քրիստոնյայի անցած ճանապարհն է դժվարություններով ու փորձություններով լի, իսկ մահից հետո դրախտային վայելքը՝ անասելի հաճելի, այնպես էլ նռան կեղևն է դառնում, իսկ հատիկները՝ քաղցր: Քրիստոնեության մեջ նույնը նաև ստանում է երկնային սիրո, աստվածային օրհնության իմաստ և ընդունվում որպես Քրիստոսի հարության խորհրդանիշ: Նռան կարմիր հյութը խորհրդանշում է սուրբ նահատակների արյունը, իսկ մեկ պտուղի մեջ բազում սերմերը միության գաղափարն են արտահայտում՝ խորհրդանշելով մարդկանց, ովքեր միավորված են մի եկեղեցու համայնքի մեջ¹:

Համաձայն Առաքել Պատրիկի, ինչպես արդեն նշել ենք, խաչի ստորին հատվածի արմավազարդերն իրականում ցորենի հասկեր են, որոնք խորհրդանշում են Սուրբ Հաղորդության մաս հանդիսացող Քրիստոսի մարմինը: Այսպիսով՝ եթե ընդունենք Առաքել Պատրիկի վարկածը, կստացվի, որ խաչի հորիզոնական թևից վեր Քրիստոսի արյունն է՝ խաղողի տեսքով, իսկ այդ թևից ներքև Քրիստոսի մարմինն է՝ ցորենի հասկերի տեսքով: Հաղորդությունը քրիստոնյայի համար կարևորագույն խորհուրդներից է, որի շնորհիվ նա միայն կարող է հավիտենական կյանք ունենալ: Հիսուս Քրիստոս ասում է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք Մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Աստվածաշունչ, Հովհաննեսի Ավետարան, 6:53-55): Խաչքարը ներկայացնում է մի հորինվածք, որտեղ հստակ արտահայտված են մարդու փրկագործության միջոցները՝ խաչը, որպես Քրիստոսի խորհրդանիշ, և Սուրբ Հաղորդության տարրերը: Խաչի և Հաղորդության շնորհիվ մարդ կարող է ադամական մեղքից ազատվել, որի խորհուրդն ունի Ադամի գանգը՝ խաչատակի վարդյակի մեջտեղում, և խաչի՝ որպես կենսաց ծառի միջոցով մաքրագործվել ու կատարելագործվել՝ հասնելով երկինք, որը խաչքարի վրա քիվն է մատնանշում:

Խաչատակի վարդյակն ավելի ուշ է առաջացել, իսկ մինչ այդ վարդյակի փոխարեն Գողգոթայի խորհրդանիշ համարվող բլուրն էր պատկերվում կամ էլ նույնիսկ դա էր բացակայում: Ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս վարդյակները, որոնք գնալով ավելի ու ավելի են մեծանում: Որտեղ որ պատկերվում է աստիճանաձև պատվանդանը, այնտեղ բացակայում է վարդյակը, և հակառակը: Սա կարող է փաստել, որ սկզբում երկուսն էլ գտնվել են Գողգոթայի խորհրդաբանությանն առնչվող դաշտում, այդ պատճառով էլ փոխարինել են միմյանց: Իսկ 12-13-րդ դարերի դասական հորինվածքներում արմավազարդը ծագում է վարդյակի վերնամասից կամ հենվում վարդյակի վրա²: Վարդյակի կենտրոնում հաճախ պատկերվում է Ադամի գլուխը (տե՛ս նկ. 16), որը ևս մեկ անգամ փաստում է, որ հնարավոր է վարդյակն ու աստիճանաձև պատվանդանն ունեն նույն խորհուրդը, քանի որ, ըստ որոշ պարականոն զրույցների, Քրիստոսը խաչվել է հենց այն վայրում, որտեղ թաղված է եղել Ադամը՝ հանդես գալով որպես Նոր Ադամ և քավելով նախաստեղծ մարդու մեղքը:

Ա. Մնացականյանը վարդյակը մեկնաբանում է որպես մի խոշոր սերմնահատիկային խորհրդանիշ, որից ծլել է կենսաց ծառը՝ խաչի տեսքով և իր վարսանդապտղային խորհրդանիշներով³: Բայց, կարծում ենք, նման մեկնաբանությունը ճիշտ կլիներ, եթե խաչը ներկայանար միայն որպես կենսաց ծառ, իսկ խաչքարի դեպքում գլխավոր և հիմնական մոտիվը քրիստոնեական խաչն է:

Վարդյակը համեմատվում է նաև արևային-աստղային և երկրային խորհրդանշանների հետ: Սակայն ամենից հավանականը, կարծում ենք, երկրի հետ համեմատելն է: 7-րդ դարում Անանիա Շիրակացին գրել է երկրի գնդաձևության մասին, որից կարելի է եզրակացնել,

¹ Степанян Н., Мотив граната в раннесредневековом изобразительном искусстве Армении, «Историко-филологический журнал», 2008, № 2, с. 213-215.

² Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 279:

³ Մնացականյան Ա., Հայկական վարդարվեստ, Երևան, 1955, էջ 182-188:

որ դեռ այն ժամանակ մարդիկ գաղափար ունեին Երկրի իրական տեսքի մասին: Յետևաբար, կլոր պատկերվելով՝ հնարավոր է, որ վարոյակը խորհրդանշում է երկիրը, իսկ որոշ խաչքարերի վրա վարոյակի ուռուցիկությունը նույնն է փաստում: Վարոյակների մեծ մասը պատված է բուսական զարդանախշերով, որը կրկին կարելի է համարել նրա՝ երկրի գաղափարն արտահայտելու: Խաչքարի վրա քիվի միջոցով արտահայտված է դրախտը՝ երկինքը, իսկ քիվին, ինչպես նաև խաչի վերին հատվածում են հանդիպում արևի և լուսնի խորհրդանիշները, հետևաբար խաչի ստորին հատվածը պետք է վերաբերի երկրին: Խաչը, ինչպես արդեն նշել ենք, ներկայացնում է մի կենսաց ծառ, որն ընդգրկում է ամբողջ աշխարհը՝ երկինքը, երկիրը և ստորգետնյա թագավորությունը: Իսկ Ադամի գանգի պատկերումը վարոյակի վրա ցուցում է երկրի վրա բնակվող մեղավոր մարդուն, ով խաչի, այսինքն՝ Քրիստոսի միջոցով կարող է կատարելագործվել՝ հասնելով դրախտ: Այդպիսի հնարավորություն մեղավոր մարդուն տվել է Քրիստոս՝ խաչվելու, չարչարվելու, իր արյունը հեղելու միջոցով, իսկ արյան խորհրդանիշներն են խաչի հորիզոնական թևից վերև պատկերված խաղողի ողկույզները և նռները: Այսինքն՝ խաչն է այն կապող օղակը կամ միջնորդը, որով հնարավոր է երկրի (մեղավոր մարդկություն) և երկնքի (դրախտ) կապը, մեղքերով լի աշխարհից մարդու հոգու՝ դեպի երկինք դառնալու հնարավորությունը: Այսպես կարելի է բացատրել 1233 թ. Իմիրգեկի խաչքարի (տե՛ս նկ. 15) վարոյակի վրա պատկերված հեծյալի պատկերը, որը խորհրդանշում է հանգուցյալին:

Խաչքարերի վրա առանձնանում է նաև եզրագոտին, որը, չնայած իր հիմնական ընդհանրությանը, այնուամենայնիվ, տարբեր է բազում խաչքարերի դեպքում: Կան ուղղանկյունաձև հատվածների բաժանված, ինչպես նաև միանման զարդանախշերով պատված եզրագոտիներ (Դադիվանքի զույգ խաչքարեր (տե՛ս նկ. 2)): Երբեմն ուղղանկյունաձև հատվածների փոխարեն ութաթև աստղեր են (Յաղարծնի 13-րդ դարի խաչքար (տե՛ս նկ. 8), Գեղարդավանքի 1213 թ. խաչքար (տե՛ս նկ. 7) և այլն), շեղանկյուններ (Պողոս վարպետի երկրորդ խաչքար), կլոր վարոյակներ կամ էլ առաքյալների պատկերներ:

Եզրագոտին ընդհանրապես ունի շրջապատող և իր մեջ ներառող նշանակություն՝ այդպիսով պաշտպանելով ներսում գտնվողին արտաքին ազդեցությունից ու ներգործությունից: Այդ կերպ այն պաշտպանում ու պահպանում, ինչպես նաև հատուկ կարևորություն է հաղորդում խաչ-կենսաց ծառին:

Յաղպատի «Ամենափրկիչ»-ի (տե՛ս նկ. 17), ինչպես նաև Մոմիկ վարպետի խաչքարերից մեկի (տե՛ս նկ. 6) դեպքում եզրագոտու վրա պատկերված են 12 առաքյալները՝ երկու կողմերում հավասարաչափ՝ վեցական բաշխված: Այստեղից կարելի է ենթադրել, որ եզրագոտիների ուղղանկյուն հատվածների բաժանումը կամ էլ ութաթև աստղերը ևս ներկայացնում են 12 առաքյալներին: Այդ դեպքում բաժանումների թիվը միշտ պիտի հստակ լիներ՝ վեց ուղղանկյուն՝ մի կողմում, վեց ուղղանկյուն՝ մյուս կողմում: Սակայն դրանց թիվը շատ տարբեր է բազմաթիվ խաչքարերի վրա՝ տատանվելով հինգ-վեցից մինչև տասը: Յետևաբար, ցանկացած դեպքում դրանք միանշանակորեն չեն կարող խորհրդանշել 12 առաքյալներին: Յաղպատի առնելով այն, որ խաչքարի հորինվածքը ներկայացնում է երկրի և երկնքի բաժանումը, իսկ խաչի ուղղվածությունը՝ ձգվածությունը դեպի երկինք, ապա կարելի է եզրակացնել, որ խաչքարերի եզրագոտու ուղղանկյուն բաժանումները և ութաթև աստղերը ևս ներկայացնում են աստիճանական բարձրացում դեպի երկինք՝ դեպի կատարելություն: Ինչպես նշում է Լ. Բուտկևիչը՝ կենսաց ծառի հետ է երբեմն համեմատվում դեպի երկինք ձգվող սանդուղքը¹: Եվ խաչքարի վրայի եզրագոտիների ուղղանկյուն հատվածները, շրջապատելով խաչ-կենսաց ծառին, գուցե ունեն դեպի երկինք ձգվող սանդուղքի խորհուրդ, և յուրաքանչյուր բաժանումը ներկայացնում է մի որևէ առաքիլություն, որի շնորհիվ մարդկային հոգին ավելի ու ավելի է մոտենում երկնքին: Այս կերպ կարելի է հասկանալ նաև եզրագոտիների ուղղանկյուն հատվածներում կյանքի հոգևոր պայթարում տարբեր աստիճանների ու

¹ Буткевич Л., указ. соч., с. 26.

մակարդակների հասած սրբերի (Գոչազանքի 1246 թ. խաչքար (տե՛ս նկ. 18)) և Լույսիսկ հասարակ մահկանացուների (Պետևանի 1265 թ. որմնափակ խաչքար (տե՛ս նկ. 19)) պատկերումները: Նմանատիպ երևույթի մասին 6-րդ դարում գրել է Հովհաննես Սանդղկավանեցին իր «Սանդղղք» ստեղծագործության մեջ: Այն բաղկացած է 30 գլուխներից, որոնք ներկայացնում են առաքինության և բարեգործության որոշակի քայլեր կամ աստիճաններ, որոնցով քրիստոնյան պիտի հասնի հոգևոր կատարելության¹: Բացառված չէ, որ եզրագոտիների ուղղանկյուն հատվածները կամ ութաթև աստղերը որևէ կապ ունենան քրիստոնյայի հոգին դեպի կատարելություն առաջնորդող այդ առաքինությունների հետ: «Խաչքարի արվեստը վերացական խորհրդանշային արվեստ է՝ ամբողջությամբ տողորված փրկության խորհրդով: Այն իր բանաձևերով երբեք դուրս չի եկել աստվածաբանության գլխավոր խորհուրդներից և ունի զուտ աստվածաբանական պաշտամունքային դեր և նպատակ»²:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ խաչքարը մի տարբերակով խորհրդանշական կերպով ներկայացնում է մարդկանց փրկագործության ամբողջ ճանապարհն ու ընթացքը: Այդ պատճառով էլ այն այդքան հաճախ հանդիպում է գերեզմաններում՝ որպես գերեզմանաքար, որի շնորհիվ մահացածի հոգին կարող է բարձրանալ դեպի երկինք՝ դրախտ, և փրկության արժանանալ: Խաչքարի վրա հստակորեն պատկերված են ուղղահայաց բաժանումները՝ Գողգոթայի խորհրդանշող աստիճանաձև պատվանդանը, որը հետո փոխարինվեց երկիրը խորհրդանշող վարդյակով, որի վրա Ադամի գանգի պատկերն է՝ որպես մեղավոր մարդկության խորհրդանշան, խաչը՝ որպես կենաց ծառ, սանդղղք, որի միջոցով մարդու հոգին երկինք է բարձրանում, և դրախտը խորհրդանշող քիվը՝ երբեմն Քրիստոսի, առաքյալների ու սրբերի պատկերներով:

Որպես երկրորդ տարբերակ՝ խաչքարը ներկայացնում է ամբողջ տիեզերքի խտացված ու այլաբանական պատկերը: Տիեզերքի կենտրոնում Ամենակալ Տերն է՝ Հիսուս Քրիստոս՝ խաչի տեսքով, ինչպես նաև՝ որպես տիեզերական կենաց ծառ: Խաչի երկու կողմերում արևի ու լուսնի խորհրդանշական պատկերումները լրացնում են երկիր-տիեզերքի ամբողջությունը: Գողգոթայի աստիճանաձև պատվանդանը կամ վարդյակը երկիրն է, ուր Աստված խոնարհվելով ծնվեց որպես Մարդ, որպեսզի մեղավոր մարդկությանը խաչի միջոցով բարձրացնի դեպի երկինք: Այսինքն՝ խաչքարն իր հորինվածքով ընդգրկում է երկիրը, տիեզերքը, երկինքն ու դրախտը, ինչպես որ խաչի չորս թևերն են ձգվում աշխարհի չորս կողմերով:

Գեղարվեստական կատարելության հասած խաչքարերի գրեթե բոլոր զարդաձևերը ներկայացված են հյուսածո զարդանախշերով, ելնդավոր գծով, որը իրար է կապում խաչքարի բոլոր տարրերը և չունի ո՛չ սկիզբ և ո՛չ էլ վերջ: Այդ հյուսածո զարդաձևերը, որոնք տարբեր խաչքարերի վրա բազում ու անկրկնելի ձևեր են ստանում խաչքարագործ վարպետների անսահման երևակայության շնորհիվ, ծագել են շատ վաղուց ու իրենց յուրովի արտացոլանքն են գտել աշխարհի շատ ժողովուրդների մշակույթներում: Հյուսածո զարդաձևերը, տարածում ստանալով 6-7-րդ դարերից, հայտնվում են հայկական, հռոմեական, բյուզանդական, եգիպտական, բրիտանական, կելտական, իսլամական և այլ մշակույթներում³: Սակայն հյուսածո զարդանախշերի ակունքները մինչ ամբողջ աշխարհում լայն տարածվելը կապվում են հին աշխարհի սկզբնական զարդաձևերի հետ:

Ըստ Լ. Բուտկևիչի՝ սկզբնական և ունիվերսալ զարդաձևերի թվին է պատկանում նաև հյուսածո նախշը, որը հայտնի է իր երկու հիմնական տեսակներով՝ հանգույցն ու ոլորները: Այս երկու մոտիվները ծագել են ավելի վաղ ու տարրական ձևերից: Հանգույցի ու ոլորների հիմնական իմաստը կապի, միության գաղափարն է՝ երկնքի ու երկրի, Արարչի ու արարածի

¹ Прп. отца аввы Иоанна, игумена Синайской горы, Лествица в русском переводе с алфавитным указателем (1898). Пятое издание Козельской Введенской Оптиной пустыни. Свято-Троицкая Сергиева Лавра, 1898.

² Ղապարյան Վ., Խաչքար, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 434:

³ Bishop M., The Middle Ages. Mariner Books, 2001, p. 29.

միասնությունը: Ոլորների հիմքում երկու սկզբների միավորումն է, որը հենվում է խաչի գաղափարի վրա: Հանգույցի և ոլորների այդպիսի տարրական մոտիվները, աստիճանաբար բարդանալով, հիմք հանդիսացան մի ամբողջական՝ հյուսածո զարդաձևերի ուղղության համար, որն էլ հսկայական տարածում ստացավ միջնադարյան արվեստում՝ յուրովի արտահայտվելով տարբեր ժողովուրդների մշակույթներում¹:

Հանգույցն ու ոլորները՝ հյուսածո զարդաձևերի նախնական տարբերակները, զարգացան ու ավելի բարդ ձևեր ընդունեցին հայկական միջնադարյան արվեստում (և ոչ միայն)՝ լայն տարածում գտնելով ոչ միայն խաչքարերի, այլև ճարտարապետական ավելի մեծ ձևերի՝ եկեղեցիների, վանքերի ու տաճարների քանդակներում, ինչպես նաև ձեռագրերի մանրանկարների մեջ: Հյուսածո բազմաբնույթ նախշերով այդ զարդաձևերն անկրկնելի ճոխություն են հաղորդում համաշխարհային միջնադարյան քրիստոնեական արվեստի տարբեր ճյուղերին, ինչպես նաև այդտեղ կարելի է գտնել նրանց նախնական գաղափարը: Քանի որ հանգույցի ու ոլորների հիմնական իմաստը երկնքի ու երկրի, Աստծո և արարածների կապը, միասնությունն է արտահայտում, հետևաբար կարելի է եզրակացնել նաև դրանց կիրառությունը քրիստոնեական արվեստում, չէ՞ որ քրիստոնեության հիմնական և գլխավոր նպատակը Աստծո և մարդու կապն ու միությունն է:

Խաչքարերի վրա հանդիպող հյուսածո զարդաձևերն այնքան բազմազան են ու անկրկնելի, որ դժվար կլինի դրանք դասակարգել և խմբերի բաժանել: Սակայն երկու մեծ խմբերի՝ բուսական և երկրաչափական հյուսածո զարդաձևերի բաժանումը հստակ է: Երկրաչափական հյուսածո մոտիվներն առավել հաճախ հանդիպում են խաչքարերի եզրագոտիների, խաչատակի վարդյակի վրա, իսկ բուսական մոտիվները, որոնք ավելի ոլորուն են, հիմնականում տեղադրված են լինում այն հատվածներում, որտեղ ավելի վաղ շրջանի խաչքարերի արմավազարդերն ու խաղողներն էին պատկերված լինում: Շատ երկրաչափական հյուսածո զարդամոտիվներ նմանվում են Կիլիկյան Մարաշ քաղաքի ասեղնագործության նախշերին: 13-րդ դարի լավագույն մի շարք խաչքարերի սալաքարերը (Մոմիկի 1308 թ. (տե՛ս նկ. 5), Գոշավանքի 1291 թ. (տե՛ս նկ. 11)) ծածկված են ցանցկեն՝ ժանյակ հիշեցնող զարդանախշով, որը հյուսածո մոտիվի պարզեցված և մանրացված տարբերակն է:

Խաչքարերի հորինվածքը ստեղծող այդ հյուսածո նախշը շատ մեծ տարածում ունի միջնադարյան հայ արվեստի գրեթե բոլոր ճյուղերում: Հայկական մանրանկարչության մեջ, եկեղեցական քանդակում այն գրեթե ամենուր է՝ համադրված բազում բուսական զարդամոտիվներով, կենդանական, առեղծվածային կենդանիներով ու արարածներով: Ըստ շատ մեկնությունների՝ ձեռագրերի խորանապատկերները՝ իրենց գույներով, զարդամոտիվներով ու խորհրդանիշներով, պետք է հոգու վրա զգայական ներգործություն ունենան և ծառայեն իբրև նախադուռ՝ ավետարանական «սրբազնագրությունների» խորքերը մտնելու համար²: Հիմք ընդունելով այդ մեկնաբանությունները՝ կարելի է եզրակացնել, որ եկեղեցիների, խաչքարերի ու ձեռագրերի նախշազարդումները բազմազան ու անկրկնելի մոտիվներով, գեղեցկությամբ, ճկունությամբ, նրբությամբ ու մանրակրկտությամբ, իսկ ձեռագրերի դեպքում՝ նաև գույներով, միտված են զգայական ազդեցություն ունենալ դիտողի կամ երկրպագողի հոգու վրա, որը կօգնի նրան առավել խորը ճանաչել ու ընկալել քրիստոնեական ճշմարտությունները: Իսկ հյուսածո զարդամոտիվը հայ միջնադարյան քրիստոնեական արվեստում հանդիպող ամենատարածված նախշերից է, հետևաբար, բացառված չէ, որ դրան ևս վերագրված է եղել նմանատիպ գործառույթ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ խաչքարերը ոչ միայն ներկայացնում են մարդու փրկագործական ճանապարհը՝ խորհրդանշական ձևով, այլև իրենց հյուսածո անկրկնելի զարդաձևերով միտված են ազդեցություն ունենալու դիտողի հոգու վրա՝ քրիստոնեական ճշմարտությունների մեջ առավել խորանալու համար:

¹ Буткевич Л., указ. соч., с. 38-39.

² Ղապարյան Վ., Մեկնությունք խորանաց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 16:

Анна Давтян, ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА. Хачкар символически представляет собой весь путь и процесс спасения человека, а также сжатый и аллегорический образ всей вселенной. В центре изображается Всевышний - Господь Иисус Христос в виде креста. Хачкар четко обозначен вертикальными делениями неба и земли, пьедестал, представляющий Голгофу, который позже был заменен розой, символизирующей землю, с изображением черепа Адама - как символ грешного человечества, крест - как древо жизни, лестница - по которой душа человека поднимается на небо, и карниз - символизирующий рай, иногда с изображением Христа, апостолов и святых. Бог, сошедший на землю, родился как Человек, чтобы вознести грешное человечество на небо через крест. Крест, как древо жизни, соединяет небо и землю, так как своими четырьмя крыльями он охватывает весь мир. А уникальные переплетающие орнаменты на хачкарах призваны эмоционально воздействовать на душу зрителя, чтобы он лучше понял христианские истины.

Ключевые слова: Хачкар, крест, орнаменты, карниз, Древо Жизни, спасение, розетка, переплетающие орнаменты.

Anna Davtyan, THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES). Khachkar (cross-stone) represents the whole way and process of salvation of mankind in a symbolic way, and it is also the condensed and allegorical image of the whole universe. Almighty God - Jesus Christ is in the centre of khachkar in the form of the cross. Heaven-Earth vertical divisions are clearly expressed on the khachkar - stair-like pedestal representing Golgotha, which was then replaced with rosette symbolizing the Earth, which has the image of the head (skull) of Adam on it, as the symbol of sinful mankind, the cross, as the Tree of Life or stairs, through which the soul of human being rises up to the sky, and the cornice symbolizing the Heaven sometimes with the images of Christ, apostles and saints. God, coming down to the Earth, was born as a Human Being, in order to raise the sinful mankind to the Heaven through the cross. The Cross, as the Tree of Life, connects the sky and the Earth, and it includes the whole world with its four wings. And the unrepeatably interlace ornaments are aimed to have emotional influence on the souls of people to make them better perceive the Christian truths.

Keywords: Khachkar (cross-stone), cross, ornament, cornice, Tree of Life, salvation, rosette, interlace ornaments.

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ¹



Նկ. 1. Առինց, 12-րդ դ.

Նկ. 2. Դադիվանք, 1283 թ.



Նկ. 3. Հադլատ, Ուբանաց առաջին խաչքար, 1211 թ.

¹ Նկարները հիմնականում վերցված են Համլետ Պետրոսյանի և Հրայր Բավեի գրքերից:



Նկ. 4. Հաղպատ, Ուբանաց երկրորդ խաչքար, 1220 թ.



Նկ. 5. Նորավանք, Մովսիկ վարպետի խաչքար, 1308 թ., այժմ՝ Էջմիածնում



Նկ. 6. Նորավանք, Մովսիկ վարպետի խաչքար, 14-րդ դարի սկիզբ, այժմ՝ Եղեգնաձորի թանգարանում



Նկ. 7. Գեղարդավանք, 1213 թ.



Նկ. 8. Հաղարծին, 13-րդ դար



Նկ. 9. Դսեղի Ամենափրկիչ, 1281 թ.



Նկ. 10. Գավառ, խաչքարի քիվ



Նկ. 11. Գոշավանք, Պողոս վարպետի խաչքար, 1291 թ.



Նկ. 12. Առիևի գերեզմանատուն, խաչքարեր



Նկ. 13. Հակոբավանք, 1223 թ.



Նկ. 14. Մեծ Մասրիկ, 881 թ.



Նկ. 15. Իմիրզեկի խաչքար, 1233 թ., այժմ՝ Էջմիածնում




Նկ. 16. Վարդյակներ՝ Աղամի գլուխը մեջտեղում



Նկ. 17. Հաղպատի Ամենափրկիչ, 1273 թ.



Նկ. 18. Գտչավանք, 1246 թ., այժմ՝ Էջմիածնում



Նկ. 19. Քանաքեռ, Պետևանի որմնափակ խաչքար, 1265 թ.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200